600.0027.16.04.02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ապրիլի 2002 թվականի N 27
ք. Երևան

«Հայէներգո» ՓԲԸ-ի կողմից «Հայէլցանց» ՓԲԸ-ին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնի կիրառման մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի ա) և է) կետերը, հաշվի առնելով «Հայէլցանց» ՓԲԸ-ի կազմավորման փաստը և ելնելով համակարգի գործունեության թափանցիկության ապահովման անհրաժեշտությունից, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Հայէլցանց» և «Հայէներգո» ՓԲԸ-ներին՝ հնգօրյա ժամկետում կնքել ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված ձևերին համապատասխան էլեկտրական էներգիայի առուվաճառքի նոր պայմանագիր և սահմանված կարգով ներկայացնել ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի գրանցմանը:
2. Ընդունել ի գիտություն, որ ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 29-ի N 31 որոշմամբ սահմանված՝ «Հայէներգո» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական էներգիա բաշխող ընկերություններին վաճառվող էլեկտրական էներգիայի միջին կշռութային սակագինը կազմում է 11,263 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահ՝ ***Վ.Մովսեսյան***